## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԾՁԲ-23/20 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի հունիսի 5-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԾՁԲ-23/20-2 ծածկագրով պայմանագրում 2024 թվականի փետրվարի 19 -ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2024 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** Մեծամորի համայնքապետարանի և Ա/Ձ «Վահրամ Կնյազյան»-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2024 թվականի փետրվարի 19 -ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է հատկացված ֆինանսական միջոցների շրջանակում աշխատանքների կատարման ծավալաթերթ նախահաշիվը և վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2024 թվականի փետրվարի 19 -ին կնքված Համաձայնագիր 1-ի համապատասխանաբար Հավելվածներ N 1-ի, N 3-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2023 թվականի հունիսի 5-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԾՁԲ-23/20-2 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից ծառայությունների մատուցման ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայությունների մատուցման ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2024 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**